ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 18

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2005թ. հուլիսի 29-ի նիստի

Մասնակցեցին.

Ա. Մարգարյան	– ՀՀ վարչապետ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
Մ. Թոփուզյան	– ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
Տ. Սարգսյան	– ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
Կ. Կիրակոսյան	– ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ, «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
Մ. Լալայան	– Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի անդամ (հրավիրված)
Գ. Հարությունյան	– «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն (հրավիրված)
Ս. Սարուխանյան	– «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ (հրավիրված)
Ս. Սեյրանյան	– «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի խորհրդական (հրավիրված)

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2005թ. առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2005թ. երկրորդ կիսամյակին կատարվող աշխատանքների մասին

(Գ. Հարությունյան, Ս. Սեյրանյան, Մ. Լալայան, Մ. Թոփուզյան, Կ. Կիրակոսյան, Տ. Սարգսյան, Ա. Մարգարյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2005թ. առաջին կիսամյակի գործունեության հաշվետվությունը,
2. Հավանություն տալ «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2005թ. երկրորդ կեսին կատարվող աշխատանքներին՝ ըստ 2005թ. հաստատված ծրագրի, այդ թվում՝ հատուկ ուշադրություն դարձնել «Տեղեկատվական անվտանգությանե եւ դրա բաղկացուցիչ մաս կազմող Կիրառական հայագիտության եւ Հոգեւոր

անվտանգության հայեցակարգի մշակման աշխատանքներին։ 2005թ. սեպտեմբերին կազմակերպել սեմինար «Պետություն-Եկեղեցի-Հանրությունե թեմայով,

3. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի տնօրեն Գ.Հարությունյանին՝ պատվիրել «Հայաստանի հանրակրթություն և զարգացման հեռանկարներրե թեմայով հիմնարար հետազոտություն,
4. Ի գիտություն ընդունել «Նորավանքե գիտակրթական հիմնադրամին 2005թ. շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ լրացուցիչ գումարի տրամադրման հարցը եւ հավանություն տալ 2006թ. ՀՀ պետական բյուջեից «Նորավանքե գիտակրթական հիմնադրամին 85 մլն դրամ հայտի չափով գումար տրամադրելու հարցին,
5. 2005 թ. օգոստոսի 6-ին կազմակերպել «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի արտագնա նիստ։

«Նորավանքե գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ,
ՀՀ վարչապետ *Ա. Մարգարյան*